ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1
25.07.2013թ. թիվ N112784478 պայմանագրի

ք.Երևան

30.10.2019թ.

ՀՀ սնանկության դատարանը՝ ի դեմս դատարանի աշխատակազմի ղեկավար Ա.Ղուկասյանի, որը գործում է դատարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Բաժանորդ), մի կողմից և «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ն՝ ի դեմս ընկերության կորպորատիվ վաճառքի ծառայության ղեկավար Ռ.Գևորգյանի (այսուհետև՝ Օպերատոր), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև կողմեր, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով ՀՀ դատական օրենսգրքի 166-րդ հոդվածի 20-րդ կետը՝ 2019թ. հունվարի 1-ից գործում է ՀՀ սնանկության դատարանը, կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին անվանափոխություն կատարելու միջոցով Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի և «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի միջև 25.07.2013թ. կնքված N 112784478 պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) «Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան, ի դեմս աշխատակազմի ղեկավար ժ/պ Հ.Սաֆարյան» բառերը փոխարինել «ՀՀ սնանկության դատարանը՝ ի դեմս դատարանի աշխատակազմի ղեկավար Ա.Ղուկասյան» բառերով:

1.2 Սույն համաձայնագին ուժի մեջ է մտնում և տարածվում 2019 թվականի հունվարի 1-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

«Օպերատոր»	«Բաժանորդ»
«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ	ՀՀ Սնանկության դատարան
Ք.Երևան, Ահարոնյան 2	Ք.Երևան, Օտյան 53/2
«ՀայԷկոնոմբանկ» ԲԲԸ	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 163004038879	Հ/Հ 900011023976
ՀՎՀՀ 02500052	ՀՎՀՀ 02583241
Կորպորատիվ վաճառքների	Աշխատակազմի ղեկավար
Ծառայության ղեկավար Ռ.Գևորգյան	Ա.Ղուկասյան
/ստորագրություն/ L.S.	/ստորագրություն/ L.S.